

այսպէս զայն անուանեալ, եթէ մանաւանդ այնպէս կոչիցի յարեւելեայց, որ եւ Պարոնցաւ եւս անուանի՝ իգիրս ինչ մեր. եւ այս՝ իբազում ամաց հետէ ունէր զնա, բայց ոչ խափանէր՝ ի վարչութենէ տէրութեանն եւ՝ ի տեղափոխութեանց, մինչեւ ծանրացաւ ընդ ծերութեանն, եւ ոչ եւս կարէր այնուհետեւ անձամբ՝ ի պատերազմ մտանել եւ զարհուրեցուցանել զթշնամիսն:

Զայսպիսի կարիս թագաւորին նկատեալ մերձաւոր թշնամոյն, սուլտանին Իկոնիոյ, (որոյ՝ ի վեց կամ եօթն ամաց հետէ դաշն հաշտութեան էր ընդ նմա), միանգամայն եւ զհամօրէն իշխանաց արեւմտեայց Խաչակրաց զբաղումն՝ ի պաշարման Տամիադայ, ի վերջ կոյս 1217 ամին՝ դրժեալ դաշանցն՝ բազմագունդ բանակաւ միեցաւ՝ ի հիւսիսային սահմանս Սիսուանայ, եւ պաշարեաց պնդապէս զմեծ եւ զկարեւոր բերդն Կապան, որ մի՝ ի իմանց հաստատութեան աշխարհին եւ թագաւորութեանն համարեալ էր. եւ արդարեւ ոչ փոքր լինէր կորուստ Հայոց, եթէ յաջողեալ էր սուլտանին ըստ փափագանացն, եւ ոչ կիսամասնեայ: Քանզի իշխան ամրոցին այնորիկ Պարոն Լեւոն՝ քաջութեամբ ժուժկալեալ՝ ազդ արար առ թագաւորն. եւ մինչ չեւ հասեալ արքունի զօրաց, պահապանօք բերդին եւ՝ խոյն ապաստանեալ իշխանօք յարձակեալ՝ իդուրս, յանկարծուց պաշարողացն, վեր՝ ի վայր պուղեաց զբանակ նոցին, եւ հուր արկեալ՝ ի պարսպաբախ բաբանսն՝ աջողակի արութեամբ զերծաւ անդրէն՝ ի ներքս<sup>226</sup>: Ի նմին ժամանակի հասին եւ զօրքն արքունի, հեծեալք եւ հետեւակք, առաջնորդ ունելով զերիտասարդ գունդստապլն զԿոստանդին որդի քեռոյ թագաւորին, (գոր՝ յետ մերոյս Լեւոնի՝ միւս Լեւոն մարթ է կոչել, եւ հաստատութիւն թագաւորութեան նորին ցամս յիսուն), եւ զմեծ իշխանն եւ զՊայլ՝ Ատան, եւ բազում այլ աւագ պարոնայս, ընդ որս եւ Կոստանդին որդի Հեթմոյ-Հեղեայ. եւ բանակեցան յանուանեալ տեղուոն Շողական, առ համանուն լերամբ, զորոց փափագելի է ճշգրտել զգիրս: Փութացաւ անդր դիմել եւ սուլտանն իւրայովքն, թուլացուցեալ զպաշարումն բերդին, եւ ճակատեցաւ հանդէպ նոցա՝ ի տեղուոյ որ Եզտի? կոչիւր, ի խոյն սահմանս Շողականի<sup>227</sup>: Ի վաղիւ

<sup>226</sup> «

զբաբնին. եւ այնով զերծան զետ քաջ մարդիկ», որպիսի էր եւ պատմողն ՍՄԲՄՍ՝ յայնժամ իբր տասնամեայ:

<sup>227</sup> Այլ Օր. Եզտի գրէ. ոչ յիշէ Արքունի պատմիչն զանուանքս:

Ինչպէս ելան, եւ զ...